


Դ. 10660

9W

ՆՇԱՆԱԿՈՐ  
ԲՈԼՏԵՎԿԻԿՆԵՐԻ  
ԿՑԱՆՔԸ



Հ Զ Ո Ւ Ս

ՊԵՏԵՐԱԾ

087.1  
4-63




P.10660

23 JUN 2009

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՈՒԹԻՒՄՆԵՐԻ ՄԻԱՅԵՒՄ

ՆԻԿՈԼԱՅ ՃՂՈՐԾ

ՄԻԶԻՆ ՅԵՎ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔԻ ՀԱՄԱՐ



087.1

Ա-63

ՆԱԽԱՎՈՐ ԲՈԼԵԴԵԿԻԿԱՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ

Վ. ՎԻՇՆԵՎՈՒԿԻ

Շ Զ Ո Ւ Ս

ԽՈԽՈՅԵՐԵՆԻՑ / ԹԱՐԳՄԱՆԵՑ  
Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԹԵՏՐԱՍ  
ՀՀԿ ԿԱՐԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՒԺԻՆ  
ՅԵՐԵՎԱՆ  
1938

12.08.2013

18901

Զախարինյա Ուկրաինայում, Զերնիգովչինոյում, այստեղ, ուր Դնեպրի Դեսնա և Սնով վտակներն իրենց ջրերը դեպի հարավ-արեվմուտք են տանում, ուստա կան ցարական իշխանության ներքո, հարյուր տարրուց ավելի, ապրում եյին Ուկրաինայի սպիտակ կազակները, Զերնիգովչինայի կազակները։ 1895 թվին մի այդպիսի կազակ, հողագուրի Շչորսը, գեղջկուհի Ալեքսանդրա Միխայլովանի հետ ունեցած որինավոր ամուսնությունից, ունեցավ մի տղա՝ Նիկոլայը։ Զերնիգովի թեմի, Գորոդնյանսկի գավառի Նոսովկա գյուղի Պոկովսկայա յեկեղեցու միաբանությունը մի այդպիսի ծննդական տվեց. «Ծնողները՝ բանակի պահեստում գտնվող զինվոր Ալեքսանդր Նիկոլայեվի Շչորս և նրա կինը Ալեքսանդրա Միխայլովնա... Մանուկը՝ արական սեռի, անունը՝ Նիկոլայ»։

Մանկանը մտցրին մկրտության ավագանի պազ ֆրի մեջ և յետ բերին խրճիթը։ Խրճիթը վողորձելի յեր, այլ կերպ ել չեր կարող լինել նախկին կազակի և սախկին զինվորի, ապա Սնովսկ կայարանի դեպոյի մեքենավարի Խրճիթը։ Այս մեքենավարն ամսական ստանում եր քսան ուրբլի, իսկ ավելի ուշ, յերբ ընտանիքի անդամների թիվն իննը հոգու հասակ', յերեսուն ուրբլի։ Մանուկը ճվճվում եր խեղղուկ խրճիթում, չոչ եր անում հողե հատակին, խաղոսմ եր հոր գործիքների հետ և լուսմ ով գիտե վորտեղից և ով գիտե ուր սլացող մարդատար ու ապրանքատար գնացքների մոնչոցը։ Հետո, մոր վեշից կամ ձեռքից բռնած, առավ առաջին քայլերը գետնի վրա, նախ խրճիթի մոտ, ապա ջրհորի ու գետակի մոտ, վորտեղ լվացք



34242-62

Եյին անում: Հետո աստիճանաբար գրագիտություն սովորեց և պատանին սկսեց դպրոց գնալ: Փոքրիկ, լուրջ, խոշոր մոխրագույն-կապույտ աչքերով այդ պատանին կարող եր ամբողջ որեռով առանձնանալ ու կարգալ: Յերեխաների խոմբը քաշում եր նրան դեպի գետը կամ անտառ, նա յերբեմն գնում եր, յերեմն հրաժարվում և յերբ շատ եյին ձանձրացնում, չեր վըրդովվում, չեր վիճում, այլ կարծ ու հատու շարժումով այնպէս եր խփում իր մոտ կանգնածին, վոր նա ձեռք եր քաշում նրանից: Յեվ յերբ ավարտեց գյուղական գպրոցի կարճատե ուսումը, յերեխան առաց հորը—նա ամբողջ կյանքում հոր հետ «դուք»-ով եր խոսում «Ապի, թույլ տվեք, վոր յեռ սովորեմ»: Հայրը մտահուհ նայեց նրան: Ել ի՞նչ ուսում կարող ել լինել դրանից հետո. այդ տարիքի յերեխաներն սկսում եյին աշխատել, ոգնել ապրուսին: Քչերը միայն, վորոնք հարուստ եյին, կարող եյին քաղաք գնալ, մտնել հոգեվոր գպրոցը, կամ, վոր յերեխաների յերազանքի սահմանն եր, մտնել կիւի գետային ուսումնարանը, կամ առետրական գպրոցը, վորը բաց եր թողնում գործարատարներ՝ ըստ իրենց լուսանկարների համարյա բոլորովին նման աղաների: Ծերունի կազակը վոչինչ չկարողացավ խոստանալ կամ անել: Այն ժամանակ յերեխան ինքը, ով գիտե ինչ կերպ, տեղեկացավ թե Ռուսաստանում վորտեղ կարող եր սովորել, վորտեղ կարող եյին ընդունել փոքրիկ գյուղացուն, ընդունել ձրի, առանց փողի: Կիւի յոթ պետական գիմնազիաների ճանապարհը փակ եր: Պալել Գալազանի կոլեժի, յերկու ուեալական դպրոցների, յերկու պետական առեւտրական դպրոցների, չորս մասնավոր և վեց մասնավոր գիմնազիաների ճանապարհը փակ եր: Ամբողջ յերկրում փոքրիկ գյուղացուն, ինչպէս պարզվեց, կարող եր ընդունել միայն սրբերի պատկեր նկարել սովորեցնող դպրոցը՝ կիւի մենաստանին կից, կամ կիւի զինվորա-բուժակային դպրոցը: Այնտեղ ընդունում եյին պետության հաշվին և չորս տարում յերեխաներից:


պատրաստում եյին ուղղափառ սրբի նկար նկարողներ և ճարպիկ բուժակներ, վորոնք, առանց յերկար մտածելու, բժշկում եյին բոլոր մարդկային ու ձիու հիմունքությունները յոդով և գերչակաձեթով:

1910 թվի ոգոստոսի տասնհինգին, 14 տարեկան պատանին, սլինդ տեղ պահած իր ծննդականը և մի քանի ուռւրվին, սպիտակեղենի ու ուռւրվին, սպիտակեղենի կիւ, այդ գարմազը ձեռքին, առաջին անգամ մտավ կիւ, այդ գարմազը քաղաքը, վոր յերկար դարեր փայլում եր Դնեպրի ափին: Պատանին անցավ բարտիների գրոսարանով, իտալացի քարտաշների սալահատակած փողոցներով և յեկավ Գոսպիտայլնայա փողոցը: Նրան ընդունեցին: Նա ամրակազմ եր, միջահասակ, լայնաթիկունք և մաքուր գեմքով: Քննություններին պատասխանում եր համառոտ ու ճիշտ: Սկսեց ոռւսական ուղղմական բուժական դպրոցի ուսուցումը, վորտեղ յուրաքանչյուր ավագի առաջ, իսկ ավագ բոլորն եյին, բացի իր մի քանի հասակակիցներից պետք եր կանգնել զգաստ, չունչը պահած և անել այն բոլորն, ինչ վոր հրամայում եյին: Յերբ բարձր դասարանցի մի սոված աշակերտ աշքերը դեպի տարածությունը հառած ասում եր. «Նախաճաշ չե՞ տեսնում», նա պետք ե վայրկենապես այդ նախաճաշն ստեղծեր սեփական ուժերով և սեփական միջոցներով:

Մենության, թագուն մտքերի, ճնշված ցանկությունների, չիոխհատուցված վիրավորանքների յերկու, յերեք տարի անցան:

Կիւը, Ռուսաստանը, աշխարհը, զորանոցների պատերից հեռու եյին: Յերեմն կանչում եյին պարագների և արձանների բացման, բացատրում եյին Հայրենական պատերազմի հարյուրամյակի և Ռումանովների տան յերեք հարյուրամյակի մասին:

Հասունացած և առնականացած 16-17 տարեկան պատանին վերջապես վկայագիր ստացավ: «Ռուսաց լեզու—լավ, թվաքանություն և յերկրաչափություն—



լավ, ոռւսաց պատմություն—լավ, լատիներեն—բավարար, քիմիա—բավարար, ֆիզիկա—բավարար, մարդակազմություն—լավ, վիրակապության գիտություն—չատ լավ, գեղարանություն — լավ, ախտաբանություն—լավ, գիտենա—լավ, վիրահատություն—լավ. պրակտիկ աշխատանքներ և հիվանդապահություն—չատ լավ»:

Տարիներ շարունակ անդադար դրվեր կարդացած ու պարագած պատանին նայում եր այս վեայադրին, նայում եր «յերկրորդ կարգի» իրավունքին և նորից կրկնում եր ինքն իրեն և հորն ու մորը. «Յես պետք է սովորեմ»: Յեվ սկսվեց մի նոր յեռամյակ՝ ծայրահեռ աղքատիկ աշխատանքի յեռամյակ, վոր հիվանդանոցներում ու գեղատներում վարձատրվում եր կոպեկներով, մի յեռամյակ, վորի ընթացքում նրա սնունդն եր որտեղան 2 կոպեկի արդանակ, 3 կոպեկի շերտ և 2 կոպեկի ընթրիք: Մարդս իր այդ վաղ հասակում շատ նորքան և հասկանում: Նոր ձեռվ յերեվաց նրան կիւր, վորտեղ ամեն վոք, ումնից նա գործ եր ինդրում, չափազանց շատ աշխատանք եր պահանջում և դրամարկղից կամ փողամանից դժկամությամբ հանում եր մի քանի ոռւբլի, աշխատելով այն ել մաս-մաս անել և մաս-մաս տալ:

Զանազան գեղքեր տեղի ունեցան: Իր գլուխիքների չափով պատանին ինքն իրեն հաշիվ եր տալիս, այդ գեղքերի մասին, նա ոռւսական հասարակարգի տապարման որդանական, համոզված կողմնակիցն եր: Յեվ առաջվա պես համառ ուրաված սովորում եր: Վերջապես 1915 թվի մարտի 24-ըն նա նոր վկայագիր ստացավ: Այն, ինչ վոր ուրիշները, արտոնյաները, ստանում եյին զանդաղ, չափված իննը, կամ տասը տարում, նա ձեռք բերեց համառ, ոլանափորված կյանքի պայքարով: Նա միջնակարգ կրթություն ստացավ: Վկայագրում գըրված եր. «Ոռւսաց լեզու — 5, գրականության պատմություն — 5, ոռւսաց քաղաքացիություն — 10

թյուն — 5, հանրահաշիվ — 5, յերկրաչափություն — 5, ֆիզիկա — 5, տիեզերագիտություն — 5, տրամաբանություն — 5, հոգեբանություն — 5, փիլիսոփայության պատմություն — 4, հունարեն — 4, լատիներեն — 5, Փրանսերեն — 5, գերմաներեն — 5»: Սա սխրագործություն եր, մտածված ու հաշվված, վորովհետեւ հայրը և գեպոյի ու արհեստանոցի նրա ընկերներն ասում եյին նրան. «Նիկոլայ, զու մեզ պետք ե ոգնես: Գալիս ե ժամանակը, կտեսնես, թե ինչ զետքեր տեղի կունենան»: Յեվ Նիկոլայն ոգնում եր: Վոչ մի ժանդարմ վոչ մի անդամ չձերբակալեց փայլուն, քաջ զինվորական բուժակին: Խոկ նա այս ու այն կողմէ եր տանում կիւր բոլշևիկների կազմակերպության փաստաթղթերը և տպված նյութերը, տանում եր Չերնիգովչչինայի յերկաթուղայիններին:

Զորակոչ: Բանակը լրացնում եյին պրապորչիկների հոսանքով: Այս շտապ կարգով սովորեցրած կիսասպաների թիվը 200 հազարից անցնում եր: Նիկոլայ Շչորսը Պորտավայում անցնում ե պրապորչիկների գասրճացը («Նիկոլայ, զու մեզ պետք կգաս»): Նա նշանակվեց 335-րդ Անապայի հետևակ զունդը: Այդ տարվա ավարտածներին անխնա քշում եյին ուղմածակատ: Ռուսական բանակը, տեխնիկայից և ուղմած թերքից զուրկ, նահանջում եր Մակենզենի և Եյխհորնի գերմանական բանակների ճնշման տակ: Շատ հետեւվակ գնդեր կորուստների պատճառով իրենց կազմը փոփոխում եյին արդեն մի քանի անդամ: Զվական լրացրւցիչ մասերը հերթի եյին կանգնած առանց հրացանների, սպասելով զենքի, վոր հավաքում եյին խրամատներում սպանվածներից ու վիրավորներից: Պրապորչիկ Շչորսը տեսավ պատերազմի մեխանիկան և ցարական հրամանատարության ճշող ուղրահետ միասին ուրախացնող անկարողությունը: Կոիվներից մեկում նա վիրավորվեց: Դեպի թիկունք, հիվանդանոց գնալիս, նա տեսավ նորակոչիկների ու աշխարհագործականների նոր գնացքներ և լսեց հազար անդամ լսված

յերգը «Ահա պլրապորշչիկը յերիտասարդ հետեւակի հառաջով աշխատում ե գնդի դրոշը պահպանել»:

Փետրվարյան հեղափոխությունը Զերնիդովյան նահանգում ծնված գյուղացիական ծագումով պրապորչիկ Շչորսի ձեռքը տվեց այսպիսի փաստաթուղթ. «Հիվանդ տուբերկուլյոզով, վիրավորվելու և հյուծվելու հետեւանքով: Կոխի բացիներ — 10-20 մանուդիտակի տեսողության դաշտի վրա»: Ստորագրություն Սիմֆերոպոլի հիվանդանոցի բժշկական հանձնաժողովի. նրա ձեռքը տվին նաև մի գրություն այն մասին, վոր պրապորչիկը բավարարված ե վերջին ամսվա աշխատավարձով, ինչպես և կերակուր յեփելու, բնակարանը տաքացնելու փայտի ու լուսավորելու նավթի դրամով: Նրան տվին նաև անձնագիր՝ հետեւյալ մակագրությամբ. «Զինվորական ծառայության համար միանդամայն անպետք ե ճանաչված»: Այս 1917 թվի դեկտեմբերին եր: Փաստաթղթերի վրա կար յերկգլուխանի արծիվով կնիքը գոյություն չունեցող կառավարության, այն կառավարության, վորը իներցիայով, մեխանիկորեն, մարդկանց չպրտում եր ու այն կողմ, ինչ վոր կոպեկներ եր տալիս նավթի համար:

Կրկին սարսափելի մենակություն, հոգնածություն, վերք և տուբերկուլյոզ:

Ֆիբրե նիհար ճամբրուկ, զինվորական սպիտակեղեն, ոճառ, յերեսսրբիչ, ատամի խողանակ, մի քանի կանոնադրություն 1915 թ. մակագրով, ալյումինե գլազ ու պատառաքաղ, մի զույգ լուսանկար:

Զմեռը դաժան եր: Ի պատասխան ժողովրդական բնական պահանջի, հողի դարավոր պահանջի, ի պատասխան խաղաղության պահանջի՝ տերերի, զործարարների, փաստաբանների ու խմբագիրների, նրանց սպաների ու գեներալների վոհմակը նետվեց դեղի Դերմանիա: Նրանք դադարգողի անյան և գնացին գերմանական ուսպանությունում առաջատար էին:

Նական սպաներին և հրավիրեցին ինադադացնելու ու վոչչացնելու իրենց իսկ ժողովրդին:

Գերմանական և ավստրիական կորպուսները, մինչև 500 հազար հոգի, շարժվեցին դեպի Ռումիանա: Փախստականները — Պետյուրան և ուրիները — պայման ստորագրեցին, վորի հիման վրա, «ոգնության» համար Գերմանիան, առ 31 հունիսի 1917 թ. սահմանական առաջնական միլիոն փությունուն, 2 3/4 միլիոն փություն կենդանի անասուն, 400 միլիոն ձու, 37 1/2 միլիոն փություն յերկաթի հանք և յուրաքանչյուր գերմանական զինվորի իրավունք ամեն որ Գերմանիա ուղարկելու 12 դրվանքանոց մթերային ծանրոց, այսինքն՝ լրացնեցիչ արտահանում 43 միլիոն 800 հազար փություն սննդամթերքի (խոզի ճարպ, յուղ, չաքար, ալյուր և այլն):

Գերմանական զորքերը շարժվեցին դեպի Ռումիանա: Առաջին կարմիր գվարդիական խմբերն սկսեցին Ռումիանայի պաշտպանությունը:

Պաշտոնաթող հաշմանդամ պրապորչիկ Շչորսը վորոշում ընդունեց: Նա շտապեց դեպի Զերնիդովչինա: Ղրիմից Զերնիդովչինա անցնելը չափազանդ գծվար եր: Անցնում ելին հարյուր հազարավոր զորացրված ուռւ զինվորներ, գնում ելին փախստականներ, անցնում ելին ուղմական խմբեր, նրանց մեջ ցցված ելին Խարկովի, Ռոստովի, Ողեսայի, Կիևի անդըրդվելի սպեկուլյանտների բեռները: Յերկաթուղային շարժումը միանդամայն խախտված եր: Գերմանական զորքերի մոխրագուն հեղեղը գրավեց Ռումիանան շարժվելով դեպի արեվելք: Գեներալ Ելիսորնը, զբուշելով ազգային Ռումիանայի ներկայացների հետ, ասաց. «Ռուսաստան — այդ դեռ յես դուցե կը հասկանամ, իսկ Ռումիանա — այդ յես չեմ հասկանում»: Գերմանական զորքերը գրավեցին Կիևը: Առաջին իսկ որը քաղաքը փաթաթվեց հարյուրավոր լարերով, վորոնք միացնում ելին շտաբները, պարետաները, վոստիկանական նախագահությունները, զին-

վորական դատարանները։ Ամենանշանավոր չենքերի տանիքների վրա, գնդացիրների մոտ քարացած հերթապահություն ելին անում ծանր մոխրագույն պողպատե սաղավարտ դրած մարդիկ։ Փողոցում ձերբակալեցին մի անցորդի, վորը չեր վողջունել գերմանական սպային։ Այդ մարդուն տարան։ Գերմանական սպան ասաց. «Նա կարծում ե, թե ինքը դեռ Ռուսաստանումն ե»։

Նիկոլայ Շչորսն անցնում եր գերմանացիների գրաված վայրերով։ Գերմանական պահակների և վերահսկիչների հայացքները լուռ հանդիպում ելին գունատ, չոր, հասարակ շինել հագած մարդու հայացքին, վորի զինվորական գլխարկից արդեն հանված էր կոկարդը։ «Ձեր անձնագիրը»։ Նրանք ստուգում ելին և վերադարձնում անձնագիրը։ Հաշմանդամ ե։

Նիկոլայ Շչորսը տուն յեկալ։ Հայրը թագնվել եր գերմանական զորակոչից, տանը սովոր եր ու դատարկություն։ Խրճիթը նրան բոլորվին փոքր թվաց։ Կրտսեր յեղբայրներն ու քույրերը վրա ընկան վերադած յեղբոր մաղախին, այն յեղբոր, վորը, յերկար տարիներ տանը չեր յեղել։ Յեղբայրն զգուշությամբ նրանց ձեռքերը հեռացրեց։ «Ի՞նչ ե, հաց չե՞ս տա»։ Այն ժամանակ վորդին կամաց ասաց մորը, վոր այնտեղ վոչ թե հաց ե, այլ ձեռքի նոսակներ։ Մայրը դլուխն որորեց ու լաց յեղավ։ Վորդին հազում եր, մայրը նայում եր նրան։ Գիշերը յեկալ և հայրը։ Վորդին նրա հետ առանձնացավ և այդ խորհրդակցությանը յերկուսն ել վորոշեցին ապստամբությունը քարձբացնել։ «Բայց չե՞ վոր դու անպետք ես զինվորական ծառայության համար»։ Ինչպես միշտ, լակոնական վոճով և զուտ, Նիկոլայ Շչորսը պատասխանեց. «Այդ դուք հետո կտեսնեք»։ Չորս որ նա նստեց տանը։ Գերմանացիք յեկան խուզարկության, նոթագնվեց գոմում։ Գերմանական սպան ծեծեց մորը, մի քանի անգամ խիեց ատրճանակի կոթով և գոչեց. «Erchiesse» (կոնդակահարեմ)։ Մայրը դիշերը շնչաց

վորդուն։ «Ձե՞ վոր դու ուսումնական մարդ ես, ամեն ձեռիցդ կդա, իսկ այժմ և՛ դու և՛ մենք հանցագործներ ենք համարվում»։ Վորդին վերցրեց ուտելիք և պատասխանեց. «Մի՛ հուզվիր, մայրիկ, մենք այնպես կանենք, վոր մարդկանց համար լավ կլինի»։ Չորս որ ու գիշերի կարմիր բանակի ջոկատի նոր հրամանատարը՝ ընկեր Նիկոլայ Շչորսը հետախուզում եր գերմանացիների գասավորությունը։ Նա խոսում եր տասնյակ գյուղացիների հետ։ Գերմանացիներն ավելի ու ավելի սարսափելի և ուժեղ ելին ճնշում։ Դյուզացիներից խլում ելին նախկին կալվածատիրական ինվենտարը։ Խլում ելին անցյալ տարվա ըերքը, ի հասուցումն հողատերերի կրած վնասների։ Գործում ելին չափված ու սառնարյուն։ Խրճիթներին թնդանոթ ելին խփում և պահանջում ելին տառացիուրենմինչե ցերեկվա ժամը 12-ը հանձնել այսինչ քանակությամբ հաց, անասուն, ճարպեղեն և ձու, համաձայն Ռւկրայնայի ազգայնական կառավարության հետ կապած պայմանագրի։ Վիրավորվածները սովոր ելին և վերջին չնշում չուր ելին խնդրում։ Գերմանական սպաները պատասխանում ելին. «Դուք առանց ջրի ելկմեռնեք»։ Հեռանալիս կանոնավոր ստացականներ ելին տալիս, վորոնց մեջ գները ութ անգամ ավելի պակաս ելին գրված լինում, քան գոյություն ունելին Ռւկրայնայում։ Ծերունիները դիմում ելին գրում և, վախվիսելով շուրջը նայելով՝ հարցնում ելին Շչորսին, թե ում պետք ե տան, «վորպեսզի գյուղացիներն աղատվեն այս թշվառությունից, վորպիսին ամենածեր մարդիկն անգամ չեն հիշում»։ Շչորսը դիմում եր մարդկանց և հավատարիմներին, հուսալիներին վավերագրեր եր տալիս։ Գյուղերում խրամատներից վերադարձներ շատ կային։ Գերմանացիք այնպիսի ուժիմ ելին մտցրել, վորպիսին Ռւկրայնան չեր տեսել նույնիսկ դաժան գոնտեյի և ֆելեզնյակի ժամանակ։ Յերեացին պարետային վարչության կոմենդատուրայի հրամանները՝ «Հուզվայական դավանանքի բնակիչ-

ներին արգելվում է վորեւ հարաբերության մեջ մըտնել դերմանական զինվորների հետ, զբոսնել նրանց հետ, խոսել և այլն։ Այս հրամանը խախառղը պատժը վում և առաջին անգամ ծեծով, յերկրորդ անգամ՝ զնդակահարությամբ։ Շչորսը զրուցում եր ճակատայինների, ուստի ու ուկրաինացիների ու հրեաների հետ և նրա հետեւ գնացին մոտ 300 հոգի։ Նա այդ ժարդկանց բացատրեց, թե ինչպես պետք է վարել պարտիզանական պատերազմը, բացատրեց, վոր կանոնավոր դաշտային բանակի դեմ պետք է դործել խելքով։ Յեկ գերմանական զորամասերը, վորոնք եշելոններով ուղիղ զորաշարժեր կատարելուց յերես եյին առել, հանկարծ մի քանի շամեցուցիչ ու շեշտակի հարգած ստացան մի անհայտ կարմիք զորամասից։ Գյուղացինները տեսնում եյին Շչորսի առաջնադաշտումը, տարիս եյին նրան աննդամ թերք, վալադներ, զենք ու ոթեվան։

1918 թվի ամռան մոտ գերմանացիններն ուկրաինական ապստամբական ջոկատներին ստիպեցին քաշվել դեպի չեղոք գոտին, դեպի ՈՒԽՍՀ սահմանը։ Ուկրաինական ապստամբության զեկավարներից մի խումբ Մոսկվա գնաց։ Այս խմբին ընդունեց Լենինը։ Նա նրանց չստիպեց սպասել, ընդունեց վոտի վրա, յուրաքանչյուրին առանձին բարեկց, ուշադրությամբ չեց, և յերբ սկսեց խոսել նրանցից ամենայերիտառարդը, շատ կանոնավոր հագնված, գոտին ամռու կապած մի հրամանատար, — դա Շչորսն եր, — Լենինն սկսեց գրի առնել։ Շչորսը զինվորականի պես ամփոփ, հակիրճ տեղեկություններ եր տալիս գերմանական բանակի, նրա գործողությունների, կադրերի, տրամադրությունների մասին։ Լենինն ուշադրությամբ լսում եր, նա անմիջական մասնակցի միջոցով ստուգում նր իր հաշիվներն այն կարճատե դադարի մասին, վոր ստացվել եր Բրեստում։ Յերկրի համար այժմ իր իր կամաց անդիրն այն եր արդեն ճանաչում է յին գերմանացիների դեմ վարած մարտերով։ Գալիս եյին Ուկրաինայից, ցույց եյին տալիս մուգ-կարմիր շերերով ծածկված մեջքերը և հայտնում։ «Կամավոր

առանց վախենալու բացասական բնութագիր եր տալիս պարտիզանական ջոկատների մասսային։ Նա առում եր այն, ինչի մասին մտածում եր ինքը՝ Լենինը — կանոնավոր բանակի մասին։

Ուկրաինական ընկերների մի մասը մնաց զինվորական զատընթացներում, Շչորսը ուղմածակատ վերադարձավ։ Նա հանձնարարություն եր ստացել՝ ձեռնամուխ լինել նոր զորամասեր կազմակերպելուն։ Զեղոք գոտու մոտ, այն ժամանակվա Ռուսաստանի սահմանում, յերկաթուղու կայարաններում կուտակվել եյին շտագ կարգով Ուկրաինայից դուրս բերված գույքով լիքը հարյուրավոր վագոններ։ Շչորսը և 10-15 մարդուց բազկացած կուտակցական աշխատավորների մի խումբ սկսեցին տեսակավորել և հաշվի առնել այդ գույքը։ «Բանակը՝ պլան և և հաշվառում»,— ասաց Շչորսն ընկերներին։ Առավոտյան ժամի 8-ից մինչև յերեկոյան ժամը 10-ը նրանք պոկում եյին վագոնների կապարե կնիքները, տեղափոխում ու հաշվում տոպրակները, փամփուշտի և ուսմբի արկղները, թամբերը, վերնաշապիկների կապոցները, հրացանի յուղի բետոնները։ Ով վոր դալիս եր Շչորսի մոտ, Շչորսը հարցնում եր. կոմունիստ և արդյոք։ Յեթե յեկողը կոմունիստ եր լինում, Շչորսը նրան վորոշ ուղմական առաջադրություն եր տալիս և բացատրում, վոր կոմունիստ լինել՝ նշանակում և զինվորական լինել։

Յերբ նա ամբողջ գույքը տեսակավորեց ու դասավորեց Մոսկվա-Կիևյան գլխավոր յերկաթուղարձի Զերնովո և Ունեչա կայարանների հարյուրավոր վագոններում, դրանից հետո հավաքագրման բաժին ստեղծեց։ «Այժմ յես կարող եմ մարդկանց հասկացնել, զինել և միանգամից նրանց զբաղեցնել»։ Ժողովուրդը շարժվեց դեպի Շչորսը, վորին արդեն ճանաչում է յին գերմանացիների դեմ վարած մարտերով։ Գալիս եյին Ուկրաինայից, ցույց եյին տալիս մուգ-կարմիր շերերով ծածկված ծածկված մեջքերը և հայտնում։ «Կամավոր



Ենք գրվում»։ Գերմանական Կորամատներից անցած մարդկանց, թվում եր, թե կարելի յեր հավատալ, սակայն Շչորաը, այսուամենայնիվ, յուրաքանչյուրին ստուգում եր։ Նա Ուկրաինայում մեծ կապեր ուներ։ Յերեմն գալիս եյին քաջ յերիտասարդներ այլ զորամասերից, նստում և պառկում եյին շտաբի շուրջը, ծխում եյին, շատախոսում։ Շչորան ամեն անդամ այդ մարդկանց մոտ եր գնում ըստ կանոնադրության հաղորդված, սափրված, վերնաշապիկը կանոնավոր ուղղած։ Յերբ տղաներն սկսում եյին խոսել իրար ընդհատելով՝ նա դիտողություն եր անում։ «Թող խոսի մեկը-ավագը։ Ի՞նչ ե, տղե՛րք, չգիտե՞ք, թե վորտեղ եք գտնվում դուք»։ Պառկածները գլուխները շուր եյին տալիս ու լուսմ։ Համհարդն ավելացնում եր. «Յերբ խոսում են գնդի հրամանատարի հետ, պետք ե վոտքի՛ կանոննել»։ Տղաները վոտքի եյին կանգնում։ Ամեն որ նա իր գունդը դուրս եր բերում շարքային և տակտիկական պարապմունքների։ 1918 թվի ամռանը տարորինակ եր լսել գնդապետի վորոշակի գինվորական ձայնը, վորը պահանջում եր. «Ավիները մի՛ շարժեք», «Վոտներդ ամո՛ւր», «ուղղություն պահպանե՛լ», «Ճռնկը չծալե՛լ»։

Ուրիշ զորամասերի չնմանող զորամաս կազմակերպելը մի շարք մարդկանց հուղում եր ու անհանդուստացնում։ Սկսեցին փնթինթալ «Հին կարգերի» մասին։ Գնդի հրամանատարի անվան շուրջը զանազան պատմություններ սարքեցին։ Հանկարծ գնդում «Համաճարակ» սկսվեց։ Ամեն առավոտ, յերբ գումարտակները շարվում եյին պարապմունքի, հարյուրավոր մարդիկ ձգվում եյին դեպի բուժարան։ Այս «փայլուն» գաղափարը տվեց մի «քաջ» մարտիկ, Դոնի կազակ, վորը համոզված կերպով բացատրում եր, թե գնդում վերականդում են հին ուժիմը և վոր պետք ե դրանից խուսափել։ Շչորսը գնաց բուժարան և սկսել ու քննել մարդկանց։ Սուտ հիվանդ ձևացողներին նա դյուրությամբ ապացուցում եր, վոր նրանք ստոր

կերպով խարում են, հիվանդներին խորհուրդներ եր տալիս, պատմում եր նրանց հիվանդության հավանական ընթացքի մասին և շատերին ապահովում եր դիաղնողի ճշտությամբ։ Յերկու-յերեքին նա ծաղրեց և հիվանդների վողջ ամբոխը բարձրաձայն, կազակավարի հռհուաց հենց այդպիսի հիվանդ ձևացողների վրա, վորպիսին եր ամբոխի մեջ գտնվածներից յուրաքանչյուրը։ «Նա, ասում են, ուրիշ տեսակ մարդ ե՝ և բոժիշկ ե և՝ գնդի հրամանատար»։ Համաճարակը մի որում դադարեց։

Մեպտեմբերի 12-ին, յերբ գունդը բավականաչափ մարզված եր, Շչորսը զեկուցեց այդ մասին, կլոր կը նիք պատվիրեց հետեւյալ մակագրությամբ. «Ուկրաինական Բողունի անվան հեղափոխական գունդ»։ Բողունի պատմական անուն ե։ Դա հին կազակական բնդապետ եր, անվախ, խորամանկ ու արագաշարժ, վոր բազմաթիվ կոիվներում հաղթել եր լեհական պաներին։

Այն խորամանկ Դոնի կազակը, վորի վրա տղերքը ծիծաղել եյին, վճռեց վերջ տալ, վոչնչացնել Շչորսին։ Նա մի խումբ մարդիկ ընտրեց, գիշերը շրջապատեց գնդի շտաբը և նետվեց Շչորսի մոտ։ Շչորսը պարապում եր. «Դե՛, վերջացրո՛ւ, հանձնիր փաստաթղթերը, դրամը, կնիքը և աղոթիր»։ Շչորսը տեղից չշարժվեց։ Նա կազակին ասաց. «Խսկույն ճանապարհվիր դեպի բանտը»։ Այդ ժամանակ ինչ վոր մեկը պատռւհանի փեղկը ծեծեց, փեղկը բացվեց, յերևաց մազափընջով մի դրուխ և Շչորսին ասաց. «Դե՛, շատ մի խոսի, դու շրջապատված ես»։ Շչորսը վեր կացավ, ասաց, վոր կվերցնի անհրաժեշտ իրերը, գնաց մյուս սենյակը և վերադարձավ, ձեռքին ձեռնանոնակ ու ատըրճանակ։ Նա ոյնպիսի տեսք ուներ, վոր մարդիկ գլխապատճռ միախան։ Նրանց յետևից Շչորսը գոչեց. «Ե՞՞խ, սրիկա՛։ Յես ինչպե՞ս պետք ե կովի տանեմ այդպիսիներին, յերբ մի մարդուց փախչում են»։ Խոռվությունը առավոտյան դեմ վերացված եր։

Շչորսն իր գունդը փորձեց մի քանի մարտական հարվածներով։ Գերմանական հրամանատարությունը պատգամավորություն ուղարկեց։ Յերեք սպա յեկան բողոքանյան գնդի շտաբը։ Նրանք առաջին անգամ եյին իրենց առաջ այդքան մոտիկից կարմիր բանակ տեսնում։ Նրանց առջև սեղանի մոտ նստած եր մի մարդ, մեծ, լուսավոր աչքերի թափանցող հայացքով։ Նրա աջ ու ձախ կողմերում կանգնած եյին հրամանատարները։ Յուրաքանչյուրի թերին կարված եր մահուդի կարմիր շեղանկյունի (ուսմբ) հրացանով ու գնդացիրով։ Շչորսը տեղից չկանգնեց և գերմանացիներին չհրավիրեց նստելու։ Գերմանական սպան հայտնեց։ «Դուք ձեր հարձակումներով գերմանական բանակին անհանգստացնում եք։ Գերմանական հրամանատարության անունից առաջարկում եմ դադարեցնել նման գործողությունները, հակառակ դեակում գործի կղրվեն յերկու գերմանական գունդ և դուք կվոչնչացվեք»։ Շչորսը շեշտակի նայեց և պատասխանեց։ «Այդ յե՞ս չեմ ձեզ անհանգստացնում, այլ դուք եք Ուկրաինայի ժողովրդին անհանգստացնում։ Ո՞վ ե ձեզ այստեղ կանչել»։ Շչորսը վեր կացավ, հրամանատարները ձբկվեցին։ Գերմանացիք քիչ յետ քաշվեցին։ «Հաղորդեցեք գերմանական հրամանատարությանը, — ասաց Շչորսը, — վոր գերմանական զորքերը հեռացնեն մեր յերկրամասից։ Զեր գնդերի դեմ մենք կշարժենք մեր գնդերը, և նրանք ավելի շատ կլինեն, և նրանք ավելի ուժեղ կլինեն»։

Առավոտից մինչև յերեկո Շչորսն աշխատում էր գնդի մարտական վերապատրաստման վրա։ Հրացանները ստուգված եյին, մարդեկ դասավորված եյին վաշտերում՝ հաշվի առնելով նրանց կուսակցականությունը և պատրաստականությունը։ Յերեկոները Շչորսն ամեն որ լինում եր սահմանագծային գեկայի նիստերին։ Այդ անհրաժեշտ եր Ուկրաինա յեր գնում փախստական— վտարանդիների անընդհատ հեղեղ։ Պետքը բուրդուրդի և Մոսկվայի բուրժուազիան դնում էր

եին։ Այնուեղ կարելի յեր իրեր վրավ դնել, վաճառել, դաշտամներն ու թեյարանները գնալ։ Այնուեղ բոլորն ել իրենց մարդիկն եյին, այնուեղ զանազան տեղեր եյին տալիս, այնուեղ հատուցում եյին հեղափոխության պատճառով ստացած վնասների վոխարեն։ Գիշեր ու ցերեկ Ունեչա կայարանից տնցնում եյին, այժմ վերջացած մարդկային ցեղի զանազան տեսակ բուրժուազիան հազարամուր ներկայացուցիչներ։ Նրանք ունեյին անցագործեր, ուկրաինական անձնագրեր, նրանց ստիլաված եյին բաց թողնել։ Բայց սա կլիներ միայն մեխանիկական ֆունկցիա, ուետք եղ մարդկանց ուսումնասիրում։ Յեկ Շչորսը ուսումնասիրում եր նրանց, զննում եր հարցացուցակները, փաստաթղթերը, զրույց եր անում։ Միաժամանակ հարավից մի ուրիշ դասակարգային գաղթի հեղեղ եր գուլիս— գալիս եյին ապստամբները, ընդհատակյա աշխատողներ, կոմունիստների ընտանիքներև խորհրդային ծառայողներ։ Մի կապոցի մեջ եյին կապվում հաղարավոր մարդկային գործեր, վիճակներ, վողբերգություններ։ Այս աշխատանքը կատարելով, նա այս գուրծուներ։ Այս պատճենից մեծ քանակությամբ մարդկանց ճանաչեց, ուսումնասիրեց այդ մարդկանց առավելություններն ու պակասությունները և ապա հմտորեն ոգտագործեց նրանց։

Նա իզուր ժամանակ չեր վատնում։ Գերմանական 106-րդ հետեւակ գնդի հարեանությունը նրան պարտադրում եր մտածել ինտերնացիոնալ աշխատանքի մասին։ Նոյեմբերին, յերբ ռադիոն հաղորդեց գերմանատեղափոխության մասին, Շչորսն ինքը գնաց գերեկան հեղափոխության մասին, Շչորսն ինքը գնաց գերեկան 106-րդ գունդը։ Այնուեղ նրան արդեն ճամանական 106-րդ գունդը։ Այնուեղ նրան կանգնեցնել նախում եյին։ Սպաները փորձում եյին կանգնեցնել նա անցավ զինվորների մոտ, նրան, բայց ապարդյուն։ Նա անցավ զինվորների մոտ, նրանց նրավորեց նրանց և առաջին անգամ լսեց գերմանաշնորհավորեց նրանց առաջին գաղթական վայրության մասին։ Գնդի կարմիր հրամական հեղափոխական «ուռան»։ Գնդի կարմիր հրամական հեղափոխական վայրության մասին գինվորներով, նատարը շրջապատված եր գերմանական զինվորներով, Պորոնք նրան թափահարում եյին, գրկում, սիդար եղորոնք նրան թափահարում եյին,

յին տալիս, լրագրեր ու գինի: Շչորսը վերցնում եր լրագրերը և, ժպտալով հրաժարվում եր սիդարներից ու գինուց, վորովհետեւ նա յերբեք իր կյանքում վոչ խմել եր, վոչ ծխել: Ահա Շչորսի հեռազրերից մեկը կրեմլ ուղղած. «Գերմանացիները կազմակերպել են խորհուրդ, կապը հարթված է: Տեղի ունեցավ հանդիսական (ցերեմոնիալ), գերմանական զինվորները հանդիսավոր յերթով անցան մեր մարտիկների առաջից: Գերմանական դորանոցի վրա կարմիր դրոշակ է ծածանվում: Գերմանացիներից վոմանք մնում են մեր դնդում: Բողունյան գունդն անցավ սահմանաբաժան գիծը»: Գերմանական և մեր յերկրի հեղափոխական զորամասերի հանդիպումը ցնցող եր: Գերմանացիք անցնում եյին հանդիսավոր յերթով և շարունակ ողում «ուռա» յեր հնչում: Նրանք արտասվում եյին՝ չափաղնց բախտավոր նրանով, վոր պատերազմը վերջացավ, նրանով, վոր իրենք ազատ են, նրանով, վոր իրենց՝ գերմանական բանվորներին ու գյուղացիներին, Ուկրաինայի ժողովուրդը ներում և նրանց ակամա ծառայության համար: Մարդիկ հուզված բացատրվում եյին, յերջանկությունից, հուզմունքից դողդողում եյին և անզգայանում, յերբ գյուղացիների մոտով, յերբ գերմանացիների մոտով անցնում եր Բողունյան գունդը: Այն ժամանակ մարդիկ տեսան, թե ինչ տեսք ունի իսկական կարմիր բանակը:

Այդ որերին Ունեչի կուսկոմի հասցեյով ստացվեց Լենինի հեռագիրը: Շչորսը պատասխանեց. «Մենք միացանք գերմանական զինվորների հետ, պարենավորվում ենք միենույն խոհանոցից, գերմանացիք ու մերոնք յերգում են ինտերնացիոնալ հիմնը»: Այդ ժամանակ գերմանական սոցիալ-դեմոկրատներն սկսեցին պառակտման պրովակացիա սարքել: Սակայն սոցիալ-դեմոկրատի կուսկոմի կուսական պարձագալ է անդիպեց Շչորսի զարմանալի զգայնությանը և ուժեղ կամքին: Շչորսը տուն՝ գերմանիա յեր ուղարկում գերմանական զինվորներին, ընդունում եր իր

մոտ այն գերմանացի կամավորներին, վորոնք 106-րդ գերմանական հետևակ գնդում «Սպարտակ» բջիջն ե-յին կազմակերպել, իսկ վորոնք փորձում եյին խանդարել և կանգնեցնել կարմիր բանակի շարժումը, ուժգնորեն փոխաւմ եր նրանց միտքը, դրանով ապացուցելով, վոր մենք իսկապես կարող ենք ավելի շատ դնդեր դուրս բերել, քան թշնամին և ավելի ամուր քան թշնամու գնդերը: Կարմիր բանակն առաջ եր շարժվում Ուկրաինական ուղղաձակատի ամբողջ հոկատարածությամբ: Շատապելով և իշխանության կառչելով՝ Սիմոն Պետլյուրան այն ժամանակ Բելայա Յերկովում հրապարակում է մի հրովարտակ, վորի մեջ կեղծում և բանվորա-դյուլուղացիական բուշեիկան շարժման լոգունդները: Այդ որերին Պետլյուրայի մոտ են հավաքվում մոտ 50 հազար խարված ապատամբ-դյուլացիներ: Նրանք ոգնում են Պետլյուրային կին մանել և զնում են «Խորհուրդների իշխանության համար» մակագրությամբ դրոշականերով: Յեկյ յերբ կիել Պետլյուրայի ձեռքն անցավ, նրա առամանները՝ Բոլրուչանը և պատժող կովենելոն գյուղացիական համագումարի ծեծ են կազմակերպում: Պոլտավայում ծեծեցին ապատամբներին: Խարկովում, յերկու շաբաթվա ընթացքում չորս անդամ տակնուվրա արին պրոֆմիությունները: Այն ժամանակ Ուկրաինայում տարածվեց «Բոլշևիկների հետելից» կոչը, կանոնավոր պըստամբության համար: Շարժվեցին տասնյակ ու հարյուրավոր կուսակցական կազմակերպություններ և թագ կացած զորամասեր, վորոնք կազմակերպված եյին գեռ 1918 թվի ամռանը, Ուկրաինայի կոմունիստական կուսակցության առաջին համադումարի կամքով: Շչորսը Բողունյան գունդը տարավ կիելի վրա: Պետլյուրայի արտասովոր պըստակացիան պետք եր լիկվիդացիայի յենթարկել: Շչորսն այդ որերին ինչ վոր փոխվել եր. նա դարձել եր ավելի շարժուն, ավելի շիվող: Նա ամեն տեղ եր: Ուղարկում եր գերմանացիներին, ընդունում եր նրանց զենքերը, ստուգում եր

մարտիկների կոչիկները — մինչև կիև շատ ճանապարհ կար կարգավորում եր գումարկը, գնդուցքային սահնակ հնարեց։ Այս յեռազեռի ժամանակ Շչորսի մոտ գյուղացիներ յեկան։ «Բարե՛լ», քեռի Միկոլա»։ Այն հանգամանքը, վոր գեռ անցյալ տարի հաջման դամապորշչին այնքան ել չփառական մարդուն «Քեռի» եյին անվանում, հենց այդքանն ել ժողովրդի հարգանքի մեծ վրկայություն եր։ Շչորսը ծերունիներին պատասխանեց սիրայիր և քաղաքավարի։ Ամենածերը ձեռքով ցույց տվեց մյուսներին և ասաց.

— Ահա՛, մենք հեծյալ գունդ ենք։

Շչորսը հարցրեց։

— Հապա վորտե՞ղ են ձիերը։

— Զիեր չունենք։ Աղքատություն ե։

— Այդպես։ Այն ժամանակ ձիերը կովի մեջ կը լերցնենք։

Յեվ, իսկապես, կիևի վրա հարձակվելիս ձիեր վերցրին, ինքն ել պահեստները վորոնեց և գտավ նիդակներ ու թրեր։ Մարտիկները ձիեր ստացան և Շչորսը հրամայեց նրանց խարանել։ Ծերունիները հավանություն տալով նկատեցին։ «Լավ տնտեսվար ե, իսկույն յերեռամ ե»։

Բանակը հարձակվում եր արագ։ Սառնամանիքներն ու բուքերն արգելք չեյին հանդիսանում։ «Զարկիր Պետլյուրին» հնչում եր Բողունյան և հարեան Տարասչանյան գնդերի շարքերում։ Մարտիկները ժաղդանքով աղավաղում եյին Պետլյուրայի անունը։ Յեվ, վորպեսզի Շչորսին կանոնեցնեն, Պետլյուրայի գործակալներն ամբողջ դոտում հայտարարեցին, թե դալիս ե ցարական գեներալ Շչորսն՝ Ուկրաինան սովորկացնելու համար։ Շչորսը շարում եր հաղարավոր գերի պետլյուրականներ, դուրս եր գալիս նրանց առաջ հասարակ կերպով, հին շինել հագած, գլխարկի վրա կարմիր աստղ և ժպտալով, Ուկրաինայի գյուղացու լեզվով ասում եր նրանց։ «Ահա յես եմ—Շչորս։

Բարե՛լ ձեզ»։ Նա պատմում եր նրանց կուսակցության մասին, Կարմիր բանակի մասին, հիշեցնում եր նրանց այն բոլորը, ինչ վոր անում եյին զերմանական գեներալները, կալվածատերերը։ Հազարավոր մարդիկ լըսում եյին նրա պարզ խոսքը, վորի յուրաքանչյուր բառը ձմարիտ եր։ Յերբեմն, յերբ վորեւէ մեկը մրսածլինելով հազում եր, նրան բշտում եյին և նա վախեցած լւում եր։ Շչորսը վորեւէ ուրախ դիտողություն եր անում, գերի գունդը հոհռում եր, մարդիկ ավելի եյին մոտենում նրան և Շչորսին՝ իրենց ընկերոջն ու քեռուն խնդրում եյին իրենց ել ընդունել «Զերվոնյան բանակը»։ Շչորսը հացնում եր, թե՝ պատրաստ են արդյոք ծասայելու ժողովրդի գործին, և յերբ գերիները Պետլյուրայի վրա կատաղած, վորը նրանց այդպես խարել եր, աղաղակում եյին, թե ամեն բան կանեն, Շչորսն ասում եր. «Լավ։ Ահա թե ինչ... վերադաբեք Պետլյուրայի բանակը, պատմեցեք այն բոլորը, ինչ վոր տեսաք մեզ մոտ, բանվորների ու գյուղացիների և Ուկրաինայի բոլշևիների մոտ և իսպավածներին ձեզ հետ յետ բերեցեք»։ Իսկ մեծ հասակ ունեցողներին և ավելի թույլ մարդկանց Շչորսն իրենց տներն եր ուղարկում հանձնարարելով նրանց հեղկոմներին։

Պետլյուրայի լավագույն կալրային գորամասերը՝ մահվան չոկատները չկարողացան կագնեցնել բուգունցիների հարձակումը։ Նախապես հաշված ըրջանցի զորաշարժերով Շչորսը գրավում եր վայր վայրի յետեւից։ Զերնիգովում նա դիտում եր գրաված ռազմական պահեստները։ Նրան առաջնորդում եր ծերունի ինտենդանտը, վորն այդ պահեստներում նստած եր համարյա տաճկական պատերազմի որերից։ Մի պահեստի մոտ ծերունին հանցավորի պես զեկուցեց, թե՝ պահեստը ինքված ե առանց իրեն և ինքը բաց անելու իրավունք չունի։ Շչորսը ժպտաց և հրամայեց փականագործները բերել։ Նրանք հանեցին դարպասը՝ չփացնելով վո՛չ կնիքները, վո՛չ կողպեքը։ Պահեստից վեր-

շըին 200 նոր գնդացիք, արկղներում տեղավորված։ Բրովարում, Կիևի վրա գրոհ տալուց առաջ, բողունականների զորատես եր։ Լուր եր տարածվել, թե Պետլյուրան 167 թնդանոթ ե պատրաստել և Դնեպրի բարձր աջ ափից պետք ե Շչորսին ջարդումիշուր անի։ Շչորսն սկսեց առաջ շարժվել։ Պետլյուրան չդիմացավ, և իմանալով, վոր շրջանցից դժվար կլինի դուրս պրծնել, վիախավ։

1919 թվի փետրվարի 6-ին Շչորսը մտավ Կիև։ Թնդանոթաձգությունից քաղաքում համարյա բոլոր ապակիները ջարդվել եյին, սակայն առաջվա պես հրաշալի եյին զբոսավայրերը և այն փողոցները, վորտեղ յերեմն շրջում եր փոքրիկ գյուղացի-պատանին՝ գիտություն վորոնելով։ Շչորսը դարձավ քաղաքի պարետ, գեներալ-նահանդապետի պալատում։ Ահա նրա հրամաններից մեկը. «Շրջանային բոլոր պարետներին. հաշվառման յենթարկել բոլոր բուրժուական տները, առանձնատները, կցաշենքերը և այլն։ Հաշվի առնել այդ շենքերը ռազմագիտական տեսակետից ինչպես և բանվարներին այնտեղ փոխադրելու համար նըլկուղներից ու խրճիթներից, վորոնց մեջ մինչև այժմ փուռմ են նրանք»։ Կիւռում վերցրին մինչև 3000 գընդացիք, 100.000-ից ավելի ոռումք, մոտ 100 թնդանոթ, 20.000 հրացան, 17.000.000 փամփուշտ, 300 ավտոմոբիլ, մոտ 1.000.000 հին շինել, 40.000 վերնաշապիկ, մոտ 50.000 զույգ կոշիկ և այլն։ Շչորսն ինքը հետագութեց պահեստները՝ հաշվելով կարծիք բանակի ուժերի ծավալման հնարավորությունները։ Այդ ուժերն անբավարար եյին, վորովհետեւ նոր կոփմերի մասշտաբները պարզ եյին։ Լեհաստանը Պետլյուրայի հետ ունեցած վեճերը դադարեցրեց։ Զանազան ատամաններ կուլակային խմբեր կազմակերպելով փախչում եյին անտառները։

Գալիցիայից Պետլյուրային ոգնության եյին դալիս կադրային կորպուսներ։ Շչորսը նշանակվեց Ռուբականական առաջին խորհրդային դիվիզիայի պետ։

Վրա հասավ ուկրաինական վարունք։ Շչորսն իր գիւղիցիան շարժեց Վիննիցայի վրա։ Վիննիցան մի հարվածով զբավկեց։ Այդ զբավումն այնքան արագ կատարվեց, վոր Տարաշչանյան դուդը, իր հրամանատար Բոժենկոյի հետ, չդիտենալով, վոր քաղաքը զբավկած և, սկսեց հարձակվել Վիննիցայի վրա։ Շչորսը և իր ընկերներն իրար նայեցին և Բոժենկոյի մոտ պատղամավորություն ուղարկեցին ապ ու հացով։ Այս կատակի վրա շատ ծիծաղեցին։ Բոժենկոն հոնքերը կիտեց և տասաց. «Պարտը տալով, մեղքը լուսվ» և գրավեց Ժմերինկան, Խլելով 200 թնդանոթ, 100 գնդացիք և 5.000 հրացան։ Շչորսի հրամանատարներն ապրում ու գործում եյին խոչոր մասշտաբով։

Այդ ժամանակ մոտեցած պետլյուրական պահեստի ուժերը ժիտումիրի կողմից Կիևի վրա հարձակվեցին։ Կիևը շրջափակել եյին Սոկոլովսկու, Զելյոննու և Սնգելի բանդաները։ Կոփմերներն արդեն տեղի եյին ունենում քաղաքի շրջակայքում։ Շչորսն արագությամբ դիվիզիան առաջ շարժեց։ Կազմատինում քառո եր տիրում։ Մինչեւ գոտին ցեխի մեջ՝ նահանջում եյին զորամասների ինչ վոր մնացորդներ։ Նրանց հանդեղ յերդելով և յուրաքանչյուր վագոնի վրա դրոշակ ամրացրած, զնում եյին Բոզունյան և Տարաշչանյան գնդերի մասերը։ Եշելոններին կանգ առնեն արդելովում եր։ Շչորսն ինքն եր նստել դիսպետչերանցում։ Եշելոնները ժամանակին տեղ հասան։ Սկսվեց գլխավոր կոփմը Կիևը դրավելու համար, վոր շարունակվեց ամբողջ մարտ ամսում և ապրիլի մի մասում։ Այստեղ շշորսականները զրոհի եյին գուրս գալիս Տետերել գետի բոցավառվող կամքջի վրայով։ Զեռքերով հանդցնում եյին վառվող բէկչորդի լան քուզերը։ Բերդիչևի մոտ, Տարաշչանյան գնդի և նավատիական «Գրոզնի» զրահապատ գնացքի հետ կուի դուրս յեկավ հրեա բանվոր յերիտասարդությունը, մորը յերբեք ձեռքը հրացան չեր վերցրել։ Միորյա «բնոր

Դիշեվյան դժոխքը», ինչպես անվանեց այդ կոխվները Շուրսը, այդ յերիտասարդներին հին կովող գարձրեց: Այնտեղ տեղի ունեցավ այն հռչակավոր դրոհը, յերբ լուռ, կանոնավոր տողաններով հանդիպում ելին իրար գալիցիական սպիտակ զնղերը և Շուրսի գումարտակները: Հանդիպում և բաժանվում ելին որական վեց անդամ: Պետլյուրովյան բանակը ջախջախվեց: Շուրսի դիվիզիան վերցրեց Նովոգրադ—Վոլինսկը, Դուրսոն, Ռումոն և մոտեցավ Գալիցիայի սահմաններին: Դիվիզիան 450 կիլոմետր տարածությամբ ուղարկած եր գրավում և գործում եր վորպես սուսնձին բանակային կորպուս:

Շուրսը, առանց շտապելու, կշռագատված յերպավալեց դիվիզիան մինչև 9 գումար: Նա իր գիտիզից 300 լավագույն մարտիկներ ընտրելով ժիամամիրում կուրսանոնների գպրոց կազմակերպեց: Յերեք որվա ընթացքում ժիամամիրի թեմական գոլոցը կարմիր բանակի դասընթացների վերածվեց: Շուրսը գուրս յեկավ շարքերի տուած և առաց ընկերներին. «Վեց տարսիք ընթացքում զուք պետք է հրաժանաւար դառնաք: Յես ձեզ կողնեմ: Մեր առաջ, ընկերներ, շատ ծանր կոխվներ կան»: Այս այն ժամանակ եր, յերբ սկսվում եր Դենիկինի առաջխաղացումը: Դեռևս տագնալի ազգանշաններ չկային, սակայն Շուրսն արգեն կադրերը ծավալում եր: Նա ապրում եր ժիամամիրում, մի փոքրիկ տան մեջ, յերկու պառայի նրա սպիտակեղենն ելին լվանում, նրա համար յեփում ելին արգանակ և իր սիրած սեփաճախտը շիլան: Գիշերները նա զնում եր կուրսանոնների մոտ, շտկում եր նրանց վերմակները, սովորեցնում եր որապահներին, թե ինչպես պետք ե գոսավորել հանած զգեստը, բացատրաւ էր, թե ինչու ի կարելի վերմակը դիմին քաշել: Պարագմունքներին ներկայանում եր վաղ առավոտյան:

Նրա առաջ 300 յերիտասարդ ընտրավի աղաներ ելին: Նա ինքը հագցրեց նրանց հիանալի վերնաշտպիկներ, հետ ծարքած ոճիքներով և տիեզ ողաշույի մո-

հուղե գլխարկներ: Ամեն բան կատարված եր համաձայն դիվիզիայի պետի ցուցումների ու նկարների, նրա առաջ ելին հարմարեցնում և չափս վերցնում: Նա ասուած եր. «Յեթե այսպիսի մի գումարտակ, այսպիսի դիվիզիա յերեա մեր ազատված քաղաքներից վորեվե մեկում, կամ արտասահմանում—Գալիցիայում—այդ շատ ավելի լավ բան կասի մեր ոգտին, քան շատ խոսքեր»:

Այս լարված նախապատրաստական աշխատանքի ժամանակ Նեժինյան գումար ապատամբեց: —Այդ գումար հարձակվեց ժիամոմիրի վրա, դիվիզիայի շտաբի վրա: Ապատամբությունը կազմակերպելելին Պետլյուրայի բանակից իբրև թե փախած կամ գերի ընկած զինվորները: Շուրսը դիշերով զնաց հանդիպելու այդ գընդին: «Ընկեր դիվակետ, վտանգավոր ե»: «Յես կդնամ ու նրանց հետ կխոսեմ: Յուրայինին նրանք պետք ե լըսեն»: Քաղաքը չանհանդստացնելու համար, Շուրսը նեժինցիների առաջապահ զորամասին հանդիպեց յերկաթուղու կայարանից մի կիլոմետր այ կողմը, սեմաֆորի մոտ: Նեժինցիներն աղմուկով վագոններից դուրս թափվեցին: Շուրսը մոտեցավ նրանց, նրանք ակամա չարք/կազմելով ուղղվեցին: Շուրսն ասաց. «Ճողովուրդըն արյուն և թափում: Ընկեր Լենինի իր արյունը թափեց ձեզ համար: Շատ ընկերներ ընկան բանվորական գործի համար մղված պայքարում: Ի՞նչ կարող եք առել գուշը»: Գումար լուս եր: «Համբում եմ մինչև յերեք: «Յերեք» ասելիս զենքը ցած դրեք: Հրամանս չըկատարելու գեպօւմ կրակ բաց կանեմ»: Շուրսը կանգնած եր ուղիղ, զգաստ: Գումար նրա առաջ նույնպես զգաստ եր կանգնած: «Յերկու» համբելիս զենքերը դետնի վրա ելին: Այն ժամանակ Շուրսը հրաման տվեց. «Յետ դա՛րձ»: Գումար քիչ յետ զնաց և Շուրսն սկսեց ստուգել զինվորների իրերի տոպրակները: Մի քանի մարդկանց տոպրակներից թափվեցին մատանիներ, ծխախոտի տուփեր, ապարանջաններ, փող: Շուրսը հարցրեց. «Ի՞նչպես վարվել այսպիսի սրբիկաների

հետ»։ Եչորսը բացատրեց գնդին, թե ովքեր են և վորտեղից են այդ գողերը։ Մարտիկները տեսան պետլյուրականների ռեխուրը։ Յեվ Եչորսը հարցրեց։ «Ի՞նչ անել դրանց»։ Վորապես կարմիր բանակայինի շարային պատասխանի նոր ձեւ, լսվեց. «Գնդակահարել»։

Եչորսը դիվիզիային պատրաստում և ինքն ել պատրաստվում եր նոր կոխվների։ Նա իր համար դրքեր, հանրագիտական բառարաններ, ուսումնական հրահանգներ բերել տվեց։ Ուկրաինայի վոչ մի դիվիզիայում քաղաքական աշխատանքն այնպես չեր դրված, ինչպես նրա ժոտ։ Գնդերում բաժանած գրքերից բացի, դիվիզիայի քաղաքինն ուներ ելի մոտ 15 հազար գիրք, բրոցուր, այբբենարան, աշխարհագրական քարտեզներ։ Եչորսը պահանջում եր. «Դուք լոգունզներ եք կախ անում, իսկ մարտիկները քարտեզ չդիտեն»։ Յեվ զորամասերում որապահում եյին մայրենի լեզվով, այբբենարանները, աշխարհագրական քարտեզներն առաջները դրած սովորում եյին։

Հուլիսին մեր Հարավային ուսումնակատը ձեղքվեց։ Դենիկինյան բանակներն սկսեցին շարժվել դեպի հյուսիս, Մոսկվայի վրա։ Եչորսի դիվիզիան աստիճանաբար տոպրակի մեջ եր ընկնում։ Արեվմուտքում գտնվում եյին լեհերը, հարավ—արեվմուտքում՝ Պետլյուրան, արևելքից՝ դենիկինցիները։ Կիևը կորցրին. Դուրս գալու համար մնում եր միայն մի անցք՝ կորուտենով դեպի Գոմել։ Ժիտոմիրը դատարկվում եր. Ընկղմվող շոգենավից փախչող առնետների նման մարդիկ փախչում եյին։ Եչորսը զեկավարում եր Հիմնարկների և թիկունքային մասերի դատարկումը և դադարի կարճ ըռաբեներին, գունատ, հյուծված, վոչ վոքին չգանգատվելով իր հոգնածության մասին, սուր կերպարանք ստացած հիվանդության մասին, հաստատուն քայլերով ման եր գալիս Ժիտոմիրի կայարանի կառամատույցում։ Ժամապահ-չինացին կրակեց և բռնեց մյուս չինացուն, վորը վագոնից շաքար եր գողանում։ Գողին տարան կառամատույց՝ Եչորսի մոտ։ Ամբոխը,

վոր դատաստանի յեր սպասում, գնաց նրա հետեւից։ Զինացին դողում եր։ Եչորսը թարգմանչի միջոցով սկսեց բացարեկ նրան, թե՝ ինչպես շաքարը, այնպես և վողջ ունեցվածքը պատկանում է բոլորին՝ ժողովը դին և նա մատուվ ցույց տվեց—«Քեզ, նրան, մյուսին»։ Զինացին, շաքարով լիքը գլխարկը բռնած, շաքարի վրա տրցունք կաթեցնելով, գլուխիր թափահարեց և սկսեց շաքարը բաժանել բոլորին։ Յեվ, հանցագործի պես ժպտալով, մի կտոր ել Եչորսին դեմ արավ։ Դիվիզիայի պետի գեմքի վրայով, մի ինչ վոր խոր և սուր մըտքից, գող անցավ։

Շրջակայքում կարծես ամեն ինչ դատարկվեց։ Լըռության մեջ զգացվում եր թշնամիների մոտենալը։ Մի հեռու ուղղիոկայան ինչ վոր մի տեղից Ողեսայի մոտից, վորանեղ գտնվում եյին հարավային գործերը, Հարցնում եր Եչորսին, թե ուր ե նա և ինչ ե անում։ Եչորսը գտնվում եր Կորոստենում, համարյա շրջապատված, և մեթողիկ կերպով յետ եր մղում հարզած հարվածի յետեվից։ Հենց այս տեղ ել պետք յեկան նրա կուրսանտները, վորոնք ընդունում եյին վաշտեր և, յեթե հարկավոր եր գումարատակներ։

Եչորսը գտնվում եր արեվմտյան և հարավային ասզմածակատների միացման կետում։ Դեպի նա եյին շտապում հարավի գորամասերը, նրա վրա յեր հենվում ամբողջ հարավային բելուռասական ճակատը։ Նրա վրա վրդովված և յերկյուղով նայում եյին սպիտակները, վորոնք Կիևը գրավելով չեյին վստահանում առաջ անցնել։ Եչորսի դիվիզիան պահպանում եր վողջ հարավ-արևմուտքը, այնպես, ինչպես վողջ ուղղությունը դեպի Մոսկվա պահպանում եր Որջոնիկիձեյի խումբը, վոր բաղկացած եր լատիշական դիվիզիայից ու չերպոննի կազակներից և ավելի ձախ, Բուլյոննու հեծյալ կորպուսը, ավելի ձախ վոլգայի և կասպիականի ծովագնացները, վորոնք Կիրովի հետ պահպանում եյին չաշտարիսանը։ Մրանք Հարավային ուսումնակատի հիմնական սյուներն եյին, վորոնց զեկավարում եր Ստալինը։ Այստեղ չեր կարելի գիշել ու նահանջել։

Շչորսը շարունակ գտնվում եր գնդերում։ Պետ-  
լյուրայի գնդերը շարժվում եյին կորոստենի վրա,  
վորպեսզի ձզմեն ու ճեղքեն մեր ուղմածակատները։  
Նրանք ընդհուպ մոտեցան քաղաքին, գտնվում եյին 7-8  
վերստի վրա։ Վճռական բոպեյին ճեռքի գնդացիրով  
հայտնվեց Շչորսը։ Բոգունցիներն ու տարաշանցիները  
լուռ բարձրանում եյին ու քայլում։ Տոթ ոգոստոսն եր։  
Ամբողջ տարվա ընթացքում կարմիր բանակայիններն  
անընդհատ կոխվներից հոգնել եյին։ Վորպեսզի հեշտ  
լինի հակագրոհի գնալը, կարմիր բանակայինները դեն  
եյին գցում իրենց կոչիկները և «Կեցցե՛ Լենինը։ Կեց-  
ցե՛ Յերրորդ ինտերնացիոնալը» գոչելով, առաջ եյին  
վտղում։

Ոգոստոսի 30-ին բոգունցիների առաջին գումար-  
տակի վայրամասում Շչորսն սպանվեց։ Գնդակը դիսել  
եր նրա գլխին, ծակել և մյուս կողմից դուրս եր յե-  
կել։

Այդ որը մարտիկները գրոհի եյին գնում այնպիսի  
արագությամբ, վոր պատմության մեջ չի յեղել։ Նը-  
րանք 25 վերստ գնացին վազելով, 25 անգամ դեն շր-  
պրտելով Պետլյուրայի դիվիզիան։ Անհասկանալի ե-  
խակապես աննկարագրելի բան եր կատարվում։ Կորոս-  
տենը չհանձնվեց։

Շչորսի դիակը կուրսանտները վերցրին ու տա-  
րան։ Այն ժամանակ թշնամիները գերեզմաններից և  
յեղքայրական գերեզմաններից հանում եյին կովուժ  
ընկած կարմիր հրամանատարների դիսեկները և գցուժ  
աղբանոցները, չների և խոզերի առաջ։ Հանրապե-  
տությունը տեղ եր ընտրում, վորտեղ կարելի լիներ  
թաղել Շչորսին, վորը լինի խաղաղ ու անվտանգ։ Մե-  
ռած Շչորսն անցավ Հարավային ուղմածակատի վողջ  
աղեղը՝ Դնեպրից մինչև Վոլգա։ Լուռ կանգնած եր  
ոլահակախումբը։ Բոլոր կայարաններում տարածված  
եր մոտեցող ոժանդակ զորքերի թնդյունը։ Դիվիզիա-  
ները յերգում եյին իրենց յերգերը՝ լատիշական, եստա-

նական, դոնական, ստալիրոպոլական։ Բոցավառվում  
եր Հարավային, Ստալինյան ուղմածակատի վոգին։  
Մենք հակահարվածի եյինք պատրաստվում։ Շչորսը  
հազարավոր վերստեր անցավ։ Յերեկոյան Սամարա-  
յուսմ նրան հողին հանձնեցին։

Քնի՛ր հանգիստ, անգին բարեկամ։ Յեվ հենց այդ  
տեղ, Սամարայի ծայրամասում, հրացանաձգություն  
սկսվեց։ Յեվ Հանրապետության ամենախաղաղ քա-  
ղաքում դասակարգային կոխի եր տեղի ունենում։  
Գերեզմանի վրայից վոտի կանգնեցին Շչորսի կինը,  
Ռևեչայի մերձուազմածակատի Զեկայի նախագահը։  
վոտի կանգնեցին կուրսանտները և գնացին կովի։

1935 թ. մարտ.

ՎԱԴԻՄ ՈՒՐՈՍԵՆԿՈ

ՂԻՎԻԶԻԱՅԻ ԱՆՎԵՐԵՐ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ

ՇԶՈՐՄԻ ՀԱՄԱՐՁ ԸՆԿԵՐ ԳՈՆՑԵՐՈՎԱԿՈՒ  
ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ<sup>1)</sup>

Հիշում եմ Բերդիչևի թեժ որերը։ Պետլյուրական-ները գրավում եյին քաղաքը։ Մերոնք մաքրում եյին դիրքերը։ Հրաձգություն, իրարանցում, խուճապ։ Մենք հասանք Բերդիչև — հատուկ շոգեքարշով և մեկ մարդատար վագոնով։ Շչորսը թռավ յերկաթուղու պաստառի վրա։ Կայարանն ամայի յեր —վոչ պարետ, վոչ յերկաթուղայիններ։ Լապտերի տակ, Ողեսայի «լոթիների» մի խումբ անվրդով կերպով թղթախաղով եր զբաղված։ Սրատես, իրեն հավաքած՝ դիվի-զիայի հրամանատարը մոտեցավ. «Ի՞նչ եք ասում, կընդունե՞ք ձեր ընկերության մեջ»։

Խաղարանկ բռնողի ձեռքից խաղաթղթերն ընկան։ Մի նավաստի բարձրացավ, նայում ե մոլորված հայցքով։ Խաղացողներից մեկի յերեսին սառել եր մի վայրկյան առաջ կուչկուչած քմծիծաղը, և այժմ նրա դեմքը հիշեցնում եր ապուչի զարգանդելի դիմակը։

Յեվ հանկարծ Շչորսը գոռաց։

— Սրիկանե՞ր։ Այնտեղ հեղափոխությունը ճնշում են, իսկ դուք...

Համհարդի ձեռքից դուրս քաշեց ձեռքի գնդացիւր։

— Հետեւեցե՞ք ինձ...

Ամբողջ խումբը մոլեգին վայնասունով վազեց

<sup>1)</sup> Հատված «Դիվիզիայի առասպելական հրամանատարը» գրքից. հրատ. «Մոլոդայա Գվարդիա», 1935 թ.։

Նրա հետեւից: Այդ մի չտեսնված, անմոռանալի տեսաբան եր: Շչորսը, գնդացիրը ձեռքին, քաղաքի ծայրամասի փողացներով վազում եր գրոհող պետյուրականների հանդեպ: Ու նրա հետքերով, սլինները ցցած, ընթանում եյին մարդիկ «ուռա՞» դռապով: Նրանց միացան վիրավորները, գումակավորները: Նահանջող շղթաները, տեսնելով իրենց դիմիդիայի հրամանատարին, անմիջապես անցան հակագրոհի: Յեկ այդ մարդի մասսան լավայի պես նետվեց թշնամու վրա:

Հին կաթողիկական յեկեղեցի: Ջրհան կայան: Կամուրջ: Գերեզմաններ... Պետյուրականները Բերդիշեցից փախուստի դիմեցին, Շչորսին թողնելով հարուստ հաղթանակ՝ հրանոթներ, գնդացիրներ, բեռնված գումակ:

Ժիտոմիրում կուրսանտների մի փոքր խմբակով նա զինաթափ արեց խոռվարար Նեժինյան գնդին: Նույն տեղը, Ժիտոմիրի կենտրոնական հրապարակում, մայիսի 1-ին կազմակերպվեց հանդիսավոր յերթ:

Թնդում եյին գելիկոնները, բալալայկաններն ու կոնտրաբասները: Հրապարակում հավաքված եյին, բացի զինվորականներից, բոլոր՝ նույնիսկ զուտ քաղաքացիական փողային ու լարային նվազախմբերը: Հզոր սյունաշարքերով անցնում եյին հրածիդները տրեխներով ու բռնագրաված բալետային տուֆլիներով: Աղմկում եյին սայլակների ու տաչանկանների վրա տեղալորված գնդացրային դասակները:

Շչորսն ընդունում եր շքերթը: Նա փայլում եր: Այտոսկրների վրա ծաղկել եյին ծիրանագույն պուտեր: Դիմիդիայի հրամանատարի սիրտը թրթուում եր հպարտությունից: Նա հատու, խրոխտ բացականչություններով, վորոնք լի եյին անսանելի հմայքով, վոգեպնդում եր իր մարտիկներին հետագա հաղթանակների համար: Իսկ նրա ձախ բռունցքի մեջ սեղմված եր Մոզիրի ճակատից ստացված տագնապային գեկույցը, վորը գրված եր փաթթոցային հասարակ թրդթի վրա: Այստեղ մարդիկ սպասում եյին անհապաղ

սպնության: Յեկ վոչ ոք չեր մտածում, վոր քառասուն ըսպեցից հետո, ուղղակի շքերթից, աղաների կեռը հառաջ կշարժվի կորոստեն-Մոզիրի ուղղությամբ:

\*\*\*

Ընկեր Դուբովյոյը կանչեց Շչորսին ուղիղ գծի մոտ:

— Մեզ հասած տեղեկությունների համաձայն, Նեժինսկի քայլքայլած գնդի մի մասը յերկաթուղով շարժուամ ե դեպի Ժիտոմիր: Անհրաժեշտ ե միջոցներ ձեռք առնել, կասեցնել:

Բայց իրավես, միջոցներ ձեռք առնելու ժամանակ արդեն չկար. Հարևան կայանից հաղորդեցին՝ «Եշելուր դուրս յեկավ»:

Շչորսը կարգադրություն արեց՝ սեմաֆորը չբանալ, իսկ ինքը կուրսանտների ու շտաբի մի քանի ընկերների հետ, դուրս յեկավ նեժինցիներին դիմագորելու:

Վիթխարի թրթուրի նման սողալով գալիս եր խոռվարանների եշելոնը: Բոլորովին բացած ապրանքատար ջերմա-վագոններում մարդիկ յերգեր եյին վոռնում և աղմուկ-աղաղակով ու սուլոցներով խրախուսում զոփապարը (տրեպակա):

Առջեռում արդեն յերեսում եյին Ժիտոմիրի յեկեղեցիների խայտաճամուկ գմբեթները, յերբ գնացքը դանդաղեցրեց ընթացքն ու կանգ առավ:

— Այս ի՞նչ սատանայական բան ե: Բացե՛լ սեմաֆորը:

— Պտտի՛ր, Գավրիլա...

Այդ բոպեյին թմբի յետեկից բռուսավ շտաբայինների փոքրիկ ջոկատը: Ամբողջ եշելոնով անցավ տագնապալից լուրը՝ «Դարա՞ն»...

Խելագար աղմուկը մի ակնթարթուամ հարվածեց բոլոր վագոններին: Տղերքը նետվեցին դեպի գնդաշիրները, փամփուշտառավիերը:

— Հապա մի մոտեցե՞ք, թիկունքի մկնե՞ր...

—Քրիստոսին, աստվածածնին... ահա-հա՛:

Մի ակնթարթում պապանձվեց առաջին վագոնը, յերկորդը, յերրորդը:

Եշլոնի յերկայնքով դանդաղ անցնում եր Շչոր-սը: Նա, թվում ե, վորեւ ուշադրություն չեր դարձ-նում նեժինցիների վրա, այլ նայում եր կողքից, և այդ առանձնապես սարսափելի յեր:

Ցոթերորդ վագոնում, կապույտ թավշյա փաթա-թաններով վոտքերը վագոնից դուրս կախած, նստել եր պոռոտախոս—Արկաշկան: Զեռքին բռնած հսկայա-կան արևածաղիկը — գնդացըրորդն առանց շտապելու հանում եր սև սերմերը, գցում յերախը, չրթացնում՝ ու վայրենի ցուցարարությամբ դուրս թքում կճեղնե-քը:

Դիվիզիայի հրամանատարը տաս քայլի վրա յեր:

Արկաշկան ինչ-վոր բան ուզեց ասել, բայց զկրո-տաց: Նրա հետեւին կանգնած ինչ վոր մեկը նրանից թոցը արևածաղիկը: Գնդացըրորդը ձեռքերը կախեց, սողաց ներքեւ՝ պաստառի վրա և կուրծքը դուրս գցե-լով՝ անզգայացավ:

Շչորաը հասավ գնացքի կեսին: Զեռքերը ծալեց մեջքին:

— Բոլորը դուրս գան հավասա՛ր, — ճշաց նա:

Ասենք՝ վոչ վոք չկար վոր դուրս գար: Բոլորն արդեն գծի պաստառի վրա եյին կանգնած: Մարդիկ հրացանները ձեռներին, յերկու շարք կադնեցին եշե-լոնի յերկայնությամբ:

Յեվ այն ժամանակ, շարքը քանդելով, առաջ յե-կավ վաշտի հրամանատարներից մեկը — հուսարական կարմիր շալվարով, բորիկ վոտներին կըկնակոշիկներ հաղած: Ճոճաքայլ, անփութորեն, յերիտասարդը մո-տեցավ Շչորսին նրա աջ ձեռքում սեղմված եր յերեք գրվանքանոց ոռմբը: Ողում թափահարեց... Յեվ

հանկարծ, հանդիպելով դիվիզիայի պետի հայացքին, թարթեց աչքերը, անմիտ կերպով ծիծաղեց և քաղա-քավարի կերպով ոռմբը մեկնեց Շչորսին նարնջի պես: Նույն իսկ ձեռքով սրբեց:

Շչորսը վերցրեց. հանձնեց մեկին:

Կարճ ասաց.

— Գրպաննե՛րը...

Ցցունքավորը հանեց գղակը: Շուռ տվեց, հանեց այնտեղից վոսկե ու արծաթե զիզի-բիզի կտորներ: Ապա մի քանի կապ վարկադրամ և մոնոգրամներով նախշած ծխախոտատումի:

— Բոլորը:

— Վո՞րտեղից ես թոցը ել...

— Զեմ հիշում... թղթախաղո՞ւմ եմ տարել, թե ուրիշ տեղը...:

Հարյուրավոր աչքեր մեխալել եյին Շչորսի հետրդ-հետեւ գունատվող դեմքին:

— Զգա՞ստ: Զենքերը վա՛ր — գետնի՞ն...

Դիվիզիայի պետն սպասեց մի բռպեյից վոչ ալե-լի: Հրացանները, նազանները, թրերը մեղմ չրիկո-ցով թափվեցին կմերի վրա:

— Չորս քայլ առաջ, հավասարվի՛ր:

Նա խոժոռեց ու կիտեց հոնքերը:

— Տվե՛ք դրդողներին:

Միանդամից զգաստացած, ու կարգապահ դար-ձած շարքերից դուրս մղվեցին յոթ հոգի:

Դիվիզիայի հրամանատարը գարշանքով յերեսը դարձրեց.

— Գնդակահարե՛լ:

Լոեցին: Ավագաթմբի հետեւից տրաքեց համա-դարկը:

Շչորսը կուացավ ու վերցրեց պսպղուն անպետք իրեղեններով լեցուն գղակը: Գլխարկի յուղոտված լուրքի տակից կախ եր ընկել մեկ շղթա՝ վարդա-դույն բրելոկով — տխմարական զատկական ձվով:

— Մարտիկներ, — գոչեց Շչորս՝ կարեկցու-

թյունից ցնցվելով:— Ո՞ւմ հետեւից եյիք գնում դուք,  
մարտիկներ: Ի՞նչպես կարող եյիք ապականել դուք  
ձեր մտքուր ձեռքերը, ձեր պրոլետարական որտերն  
այս խաժամուժով:

Այստեղ նա ցասումով նետեց ծանր դզակը գետ-  
նին և վոտով կոխ տվեց այն:

— Ո՞ւր եյիք գնում դուք: Ո՞ւմ համար եյիք բա-  
ցում ուղմաճակատը: Դո՛ւք, պետյուրականների ու  
սպիտակ բանդիտների գնդակներով ծակծկվածներ:  
Դո՛ւք, վոր յեկել եք մուրամից ու արորից —այժմ թշ-  
նամուն եք տալիս կարմիր դրոշը վոտի փաթաթաններ  
դարձնելու համար...

Շարքերի յերկայնքով իւեղդված հառաչանքներ  
եյին լսվում:

— Յես չեմ հավատում, վոր նեժինցիները հեղա-  
փոխությանը դավաճանեն: Լոո՞ւմ եք, նեժինցիներ,  
չեմ հավատում: Հենց առաջին իսկ մարտում դուք  
կապացուցեք, վոր յես չեմ սխալվում: Մա՛րշ դեպի  
վագոնները:

Հչորսը չեր սխալվել: Մոտիկ տաք որերը հաստա-  
տեցին այդ: Պետյուրականները վաղուց չեյին հան-  
դիպել այդպիսի կատաղի գրոհների, վորտեղ մարդիկ  
լավացի նման հոսելով, հավասարապես գործ եյին  
դնում սվինները, ատամները և նոնակները:

Թարգմանիչներ՝ Հ. Հայրապետյան և Ս. Ռիմեյան  
Պատ. խմբագիր՝ Ս. Արմենյան  
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան  
Սրբագրիչ՝ Մանուկյան  
Կոնտրոլ սրբագրիչ՝ Ս. Շահբագյան



Գլավվիտի լիազոր՝ Կ-1707. Հրատ. №4366  
Պատվեր 12. Տիրաժ 6000  
Թուղթ 62×94. Տպագր. 2½ մամ.  
Մեր մամուլում 24,480 նիշ. Հեղինակ. 1½ մամ.  
Հանձնված և արտադրության 2 հունվ. 1938 թ.  
Ստորագրված և տպագրության 20 փետրվ. 1938  
Գինը 50 կոպ.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ, ՅԵՐԵՎԱՆ, ԼԵՆԻՆԻ ՓՈՂ. 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0143110

ԳԻՆԸ 50 Կ.

203

16901

մհ-1  
աւ 2

В. ВИШНЕВСКИЙ  
**ЩОРС**  
Гиз Арм. ССР, Ереван, 1938 г.